ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 62-Ա

<<28>> նոյեմբերի 2024 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻ 48.25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՎԵՑ ԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՎ <<IT In Villages>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով <<IT In Villages>> հասարակական կազմակերպության նախագահ Կարինե Ավետիսյանի 2025 թվականի ապրիլի 4-ի դիմումը՝ Սառնաղբյուր բնակավայրի 7-10-րդ դասարանի երեխաների համար <<C++>> ծրագրավորման լեզվի վեց ամիս ժամկետով անվճար դասընթաց կազմակերպելու նախաձեռնության վերաբերյալ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Սառնաղբյուր բնակավայրի մշակույթի տան շենքի երրորդ հարկում գտնվող 48.25 քառակուսի մետր մակերեսով սենյակը 2025 թվականի հունիսի 20-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում անհատույց օգտագործման տրամադրել <<IT In Villages>> հասարակական կազմակերպությանը՝ Սառնաղբյուր բնակավայրի 7-10-րդ դասարանի երեխաների համար <<C++>> ծրագրավորման լեզվի անվճար դասընթաց կազմակերպելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Անհրաժեշտ պայմաններ ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված դասընթացի պատշաճ կազմակերպման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 12	դեմ՝ 0	ձեռնպահ՝ 0
Ա. ՄԱՐԻԲԵԿՅԱՆ			
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ			
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ			
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ			
Ա. ՇԱԲՈՅԱՆ			
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ			
Ժ. ԱԼԵՔՅԱՆ			
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ		չի մասնակցել	
Ն. ՍԱՐՈՅԱՆ			
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ			
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ			
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ			
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԱՐԻԲԵԿՅԱՆ

<<28>> ապրիլի 2025 թ.
քաղաք Մարալիկ